ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» նոյեմբերի 2020 թվականի N 368

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0507-0004 ԵՎ 06-007-0503-0006 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ,ԱՆՆԱ ՄԱԿԱՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Արևելյան փողոց թիվ 26 հասցեի բնակիչ Աննա Մակարի Հարությունյանի 25.11.2020թ թիվ Հ-369 դիմումը, 25.11.2020թ. տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հարձնաժողովի քաղվածքը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0507-0004 ծածկագրի տակ գտնվող, ըստ փաստացի չափագրման 2.44038 հա խոտհարքի և 06-007-0503-0006 ծածկագրի տակ գտնվող 0.55172 հա խոտհարքի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը:

   ա/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0507-0004 ծածկագրի տակ գտվող խոտհարքի մակերեսը՝ 2.44038 հա

   բ/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0503-0006 ծածկագրի տակ գտվող խոտհարքի մակերեսը՝ 0.55172 հա

   գ/ Հողամասերի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Աննա Մակարի Հարությունյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2020 թվականի N 369

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019 թվականի N 86-Ն որոշման 4-րդ կետի բ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «Բնակարանային շինարարություն» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 1 դաս 1) «5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ գումար:
2. «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» (բաժին 1 խումբ 1 դաս 1) ծրագրի նախահաշվի «5122–Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2020 թվականի N **370**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 27 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լենա Մելսիկի Աղաբաբյանի կողմից ներկայացված 30.11.2020թ. թիվ Ա-377 դիմումը, 23.11.2020թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի թիվ 157 և 158 ժառանգական գործի թիվ 3511 և 3512 գրանցամատյանով հաստատված և 29.05.2008թ. թիվ 2334086 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց թիվ 27 հասցեով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և առևտրի օբյեկտին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց 27/5:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**